# ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԾՁԲ-26/02»

ք. Կապան «10» փետրվար 2026թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Աժդանակ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Մկրտչյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է վարձակալության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության միավորի գինը կազմում է՝

1-ին չափաբաժին՝ 22900 (քսաներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
2-րդ չափաբաժին՝ 26800 (քսանվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
3-րդ չափաբաժին՝ 30800 (երեսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
4-րդ չափաբաժին՝ 160000 (մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
5-րդ չափաբաժին՝ 17600 (տասնյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
6-րդ չափաբաժին՝ 126500 (մեկ հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
7-րդ չափաբաժին՝ 126500 (մեկ հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
8-րդ չափաբաժին՝ 109700 (մեկ հարյուր ինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| Կապանի համայնքապետարան | <<Աժդանակ>> ՍՊԸ |
| Ք.Կապան, Չարենցի 1 | ՀՀ Սյունիքի մարզ Լեռնաձոր Բարիկյան |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | թաղ. փ. 4, 1/1 |
| ՀՀ 900312512040 | «Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ |
| ՀՎՀՀ 09426088 | Հ/հ 2470805536690000 |
| | ՀՎՀՀ 09425679 |
| ------------------------------ (ստորագրություն) Կ.Տ. | ------------------------------ (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«10» փետրվար 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Միավորի ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 45521100/1 | Անվավոր էքսկավատորի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | Գնման առարկա է հանդիսանում անվանոր էքսկավատորի վարձակալության ծառայության մատուցումը՝ մեքենավարի հետ միասին։<br>Անվանոր էքսկավատորի պարամետրեր՝ XE 210<br>Արտադրման տարեթիվ՝ **2022թ.**,<br>Շերեփի տարողունակությունը՝ 0,86մ³,<br>Շարժիչի հզորությունը՝ 180 ձիաուժ,<br>Քաշը՝ առնվազն 20200 կգ<br>Մակնիշ՝ XCMG: | մոտ/ժ | 22900 | 1 | Կապան համայնք՝ ըստ պատվիրատուի առաջադրանք-պահանջի՝ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2026թ. |
| 45521100/2 | Թրթուրավոր էքսկավատորի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | Գնման առարկա է հանդիսանում թրթուրավոր էքսկավատորի վարձակալության ծառայության մատուցումը՝ մեքենավարի հետ միասին։<br>Թրթուրավոր էքսկավատորի պարամետրերը՝ XE 305<br>Արտադրման տարեթիվ՝ **2022թ.**,<br>Շերեփի տարողունակությունը՝ առնվազն 1,6 խմ,<br>Ունի հիդրոմուրճ,<br>Շարժիչի հզորությունը՝ առնվազն 229 ձիաուժ,<br>Քաշը՝ 32000 կգ<br>մակնիշ՝ XCMG: | մոտ/ժ | 26800 | 1 | Կապան համայնք՝ ըստ պատվիրատուի առաջադրանք-պահանջի՝ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2026թ. |
| 45521100/3 | Թրթուրավոր բուլդոզերի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | Գնման առարկա է հանդիսանում թրթուրավոր բուլդոզերի վարձակալության ծառայության մատուցումը՝ մեքենավարի հետ միասին։<br>Թրթուրավոր բուլդոզերի պարամետրերը՝ TY 320<br>Արտադրման տարեթիվ՝ **2022 թ.**,<br>Շարժիչի հզորությունը՝ 239 կվտ,<br>Առավելագույն հաղթահարելի թեքություն առնվազն՝ 30 աստիճան<br>Սայրի ծավալը՝ առնվազն 9,96խմ,<br>Քաշը՝ առնվազն 35900 կգ<br>մակնիշ՝ XCMG | մոտ/ժ | 30800 | 1 | Կապան համայնք՝ ըստ պատվիրատուի առաջադրանք-պահանջի՝ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2026թ. |
| 45521100/4 | Գրեյդերի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | Գնման առարկա է հանդիսանում գրեյդերի վարձակալության ծառայության մատուցումը՝ մեքենավարի հետ միասին։<br>Գրեյդերի պարամետրերը՝ GR2153A<br>Արտադրման տարեթիվ՝ **2020թ.**,<br>Անիվի բանաձև՝ 6*6 քաշող<br>Շարժիչի հզորությունը՝ 164 կվտ,<br>Քաշը՝ առնվազն 16100 կգ<br>մակնիշ՝ XCMG | օր | 160000 | 1 | Կապան համայնք՝ ըստ պատվիրատուի առաջադրանք-պահանջի՝ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2026թ. |
| 45521100/5 | Հիդրոմուրճով բազմաֆունկցիոնալ անվավոր էքսկավատոր-բեռնիչի՝ վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | Գնման առարկա է հանդիսանում հիդրոմուրճով բազմաֆունկցիոնալ անվանոր էքսկավատոր-բեռնիչի՝ վարձակալության ծառայության մատուցումը՝ մեքենավարի հետ միասին։<br>Հիդրոմուրճով բազմաֆունկցիոնալ անվավոր էքսկավատոր- բեռնիչի պարամետրեր՝ XCMG XC8-S3570<br>Արտադրման տարեթիվ՝ **2023թ.**,<br>Շերեփի տարողությունը՝ 1,3մ³,<br>Շարժիչի հզորությունը՝ 73,5 կվտ,<br>Փորման խորություն՝ 4,3մմ,<br>Բեռնատարողություն՝ 4,6տ,<br>Բեռնման աշխատանքային բարձրությունը՝ 4,5,<br>Փորման ուժը՝ 72,6 Կն | մոտ/ժ | 17600 | 1 | Կապան համայնք՝ ըստ պատվիրատուի առաջադրանք-պահանջի՝ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2026թ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 60181100/1 | Բեռնատար ինքնաթափ վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | Գնման առարկա է հանդիսանում բեռնատար ինքնաթափի վարձակալության ծառայության մատուցումը՝ մեքենավարի հետ միասին։<br>Բեռնատարի պարամետրերը՝ XCMG XGA3250D2KC<br>Արտադրման տարեթիվ՝ **2021թ.**,<br>Բեռնատարողունակությունը՝ **25**տ,<br>Շարժիչի հզորությունը՝ 369 ձիաուժ,<br>Քաշը՝ առնվազն 15620 կգ<br>մակնիշ XCMG | օր | 126500 | 1 | Կապան համայնք՝ ըստ պատվիրատուի առաջադր անք-պահանջի՝ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2026թ. |
| 60181100/2 | Բեռնատար ինքնաթափ վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | Գնման առարկա է հանդիսանում բեռնատար ինքնաթափի վարձակալության ծառայության մատուցումը՝ մեքենավարի հետ միասին։<br>Բեռնատարի պարամետրերը՝ XCMG XGA3250D2KC<br>Արտադրման տարեթիվ՝ **2021թ.**,<br>Բեռնատարողունակությունը՝ **25**տ,<br>Շարժիչի հզորությունը՝ 369 ձիաուժ,<br>Քաշը՝ առնվազն 15620 կգ<br>մակնիշ XCMG | օր | 126500 | 1 | Կապան համայնք՝ ըստ պատվիրա՝ տուի առաջադր անք-պահանջի՝ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2026թ. |
| 77111300/1 | Գլդոնի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | Գնման առարկա է հանդիսանում ճանապարհային թրթռագլդոնի վարձակալության ծառայության մատուցումը՝ մեքենավարի հետ միասին։<br>Թրթռագլդոնի պարամետրերը՝ XS 163<br>Արտադրման տարեթիվ՝ **2022թ.**,<br>Շարժիչի հզորությունը՝ 125կվտ,<br>Կենտրոնացված թմբուկի ծանրաբեռնվածությունը՝ 10200կգ,<br>Քաշը՝ առնվազն 16000 կգ<br>մակնիշ՝ XCMG | օր | 109700 | 1 | Կապան համայնք՝ ըստ պատվիրատուի առաջադր անք-պահանջի՝ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2026թ. |

| | |
|---|---|
| Այլ պայմաններ | Կատարողին պատկանող մեխանիզմները աշխատանքներ են իրականացնելու Կապան համայնքի տարածքում, ներառյալ՝ բնակավայրերը։<br>Մեքենավարները պետք է ունենան մեխանիզը շահագործելու համար համապատասխան վկայականներ, գտնվեն սթափ վիճակում։<br>Մեխանիզմների միավոր առաջարկի գնի մեջ ներառվում են դրանց պահպանման, տեխնիկական սպասարկման, վերանորոգման/ընթացիկ և կապիտալ/, վառելիքի տրամադրման ծախսերը, հարկերը, տուրքերը և այլ ծախսեր, որոնք կատարվում են Կատարողի կողմից։<br>Մեխանիզմերը մշտապես պետք է գտնվեն սարքին վիճակում։<br>Աշխատանքի նկարագիրը և վայրը Կատարողին ներկայացվում է ըստ Պատվիրատուի մոտ ծագած պահանջի՝ աշխատանքները սկսվելուց 2 ժամ առաջ։<br>Նախատեսվում է աշխատանքներն իրականացնել առավելագույնը՝ 6 օրյա և առավելագույնը՝ 8-ժամյա աշխատանքային գրաֆիկով։<br>Ծառայության մատուցման ընդհանուր գինը սահմանվում է համաձայն կատարված աշխատանքի և ներկայացված կատարողականի։<br>Մեխանիզմները հանդիսանում են Կատարողի սեփականությունը/անհրաժեշտության դեպքում կպահանջվեն հիմնավորող փաստաթղթեր/։ |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Կապանի համայնքապետարան
Ք.Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040
ՀՎՀՀ 09426088

-----------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ Լեռնաձոր Բարիկավան
թաղ. փ. 4, 1/1
«Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
հհ 2470805536690000
հվհհ 09425679

-----------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 10 » փետրվար 2026թ. կնքված
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45521100/1 | Անվավոր էքսկավատորի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ |
| 2 | 45521100/2 | Թրթուրավոր էքսկավատորի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ |
| 3 | 45521100/3 | Թրթուրավոր բուլդոզերի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ |
| 4 | 45521100/4 | Գրեյդերի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ |
| 5 | 45521100/5 | Հիդրոմուրճով բազմաֆունկցիոնալ անվավոր էքսկավատոր բեռնիչի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ |
| 6 | 60181100/1 | Բեռնատար ինքնաթափ վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 60181100/2 | Բեռնատար ինքնաթափ վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ |
| 8 | 77111300/1 | Գլդոնի վարձակալություն՝ մեքենավարի հետ մեկտեղ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ | ՀԿ |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով, ՀԿ՝ համաձայն կատարողականի:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Կապանի համայնքապետարան
Ք.Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040
ՀՎՀՀ 09426088

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<Աժդանակ>> ՍՊԸ

ՀՀ Սյունիքի մարզ Լեռնաձոր Բարիկավան
թաղ. փ. 4, 1/1
«Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
հհ 2470805536690000
հվհհ 09425679

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*« 10» փետրվար 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ________________________ | հհ________________________ |
| հվհհ _______________________ | հվհհ_______________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________________ | ______________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 10 » փետրվար 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*« 10 » փետրվար 2026 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________________-ի և _________________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

___________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________ ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.